

Տ Ե Տ Ե Ս

ՀԱՆՐԻԿԱ ԱՄԱՆԵԱՑ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Տ Ե Տ Ե Ս Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Դաս Դ.

ԵՂԱՆԱԿՔ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ — ԴԱՍԱԽՈՐԾՈՒԹԻՒՆ ՃԱՐՏԱՐՈՒԹԵԱՆՑ⁽¹⁾

Տ Ե Տ Ե Ս . — Գիտէք թէ որն է երրորդ ճարտարութիւնն ,
այլ չը գիտէք թէ Տնտեսագիտութեան մէջ ի՞նչ անուն ունի
այդ ճարտարութիւնը : Զեր լուսութիւնն այս կը նշանակէ :
Արդ , երրորդ ճարտարութեան անունն է Տարազագործական
ճարտարութիւն (Industrie manufacturière) :

ՊԵՏՐՈՍ . — Ներեցէք , էփէնտի , մարդս երբոր բառ երուն
նշանակութիւնը աղէկ գիտնայ , բանն ալ աղէկ կը հասկնայ :
Ես հիմայ՝ շխտակը՝ չկատար աղ տարազագործական բառը ի՞նչ
կը նշանակէ :

Տ . — Իրաւունք ունիք . պէտք է լաւ գիտնալ բառ երուն
նշանակութիւնն : Այդ բառին արմատը՝ որ է Տարազ՝ կը նշա-
նակէ կերպ , ձեւ : Տարազագործական ճարտարութիւնն ալ
կը կայանայ՝ նախնական նիւթոց ձեւ տալու մէջ : Տարազ կը
նշանակէ նաեւ բանուածք , վարպետ բանուածք . Տարազագոր-

(1) Շարունակութիւն :

ծութիւն ալ՝ բրդեղին զործել, մանել։ Տարագազործական ճարտարութիւն ըսելով՝ հասարակօրէն կ'իմացուի այդ տեսակ գործեր, մանիփարուռա, ինչպէս որ Գաղղիերէնի մէջ։ Սակայն Քաղաքական տնտեսութեան մէջ տարագազործական ճարտարութիւն անուամբ կ'իմացուի բովանդակութիւնն այն աշխատութեանց, որոց օգնութեամբ նախնական նիւթերն՝ արտեսափառ եւ ձեռագիտութեանց միջոցաւ՝ մարդոց պիտոյքն յագեցնելու աւելի կարօղ արտադրութեանց կը վոխակերպին։

Պ. — Մարդոց պիտոյքն յագեցնելու կարող արտադրութեանց կը փոխակերպին։ միտքս պահեմ։

Տ. — Պարզապէս կարող չըսի, այլ աւելի կարող։ Որովհետեւ նախնական նիւթերն ալ կրնան մինչեւ աստիճան մը գոհացնել մարդոց պիտոյքն։ Այսպէս, նախնական մարդը կամ վայրենին իրենց սպաննած վայրի գաղանին մորթն իրեւ վերարկու կը գործածեն, եւ նախնական երեք պիտոյքներն մին յագեցուցած կ'ըլլան։

Պ. — Բայց անկատար կերպով։ հասկցայ։ Եւ այս պատճառաւ՝ վայրի գաղանին մորթն ալ անկատար արդիննի կը կոչուի։ Աս հաշուով, ջնտես Աղայ, հին ժամանակը մինակ անկատար արդինք կը գանուէր։ Ուրիշ բան մըն ալ կայ։ Հին ժամանակը Տարագագործական ճարտարութիւնը չը կար, անանկ չէ։ բհօսդեին հագնօղ մարդուն քով ձեւը ո՞ւր կը փնտուես։ փապոյգա, փարուռա, մանիփարուռա ի՞նչ բան ունի հոն։ Ուրեմն հին ժամանակը։

Տ. — Լաւագոյն է ըսել՝ նախնական մարդկութեան մէջ կամ նախնական ընկերութեանց մէջ։

Պ. — Շատ աղէկ, գլխուս վրայ։ ի՞նչ կ'ըսէի կոր։ հանուն նախնական մարդիկ միայն երկու ճարտարութիւն ունէին, Արտահանական ճարտարութիւն եւ Հողագործական ճարտարութիւն։ Հողագործութիւն, հովուութիւն, անկէ անդին չահցնիր նախնական մարդկութիւնը։ Գործիք մործիք ալ կը շինեն կոր։ բայց ատոր խօսքը չըլլար, քարէ գործիքներ։ քարը քարին կը զարնեն կոր, պատկերը տեսայտեղ մը։ քարին կառըին ալ գործիք կ'ըսե՞մ ես։ Անով հայ կը շինուի, պողին կը շինուի, ամերիգա, չուխայ, ճերմակե-

զէն ու հագուստ կը չինուի՞։ ասանկ գրասեղան, ժամացոյց, գիրք կը չինուի՞։ Ասոնք իատարեալ արդիւնք են ու բոլորն ալ Տարազագործական ճարտարութեան մէջ կը մտնան, անանկ չէ։ ինձի նայիս նէ բուն ճարտարութիւնն ալ աս է։ Կոյինին թեօդիշին ուր, աս հագուստը ուր՝ քովէ քով դնենք՝ բօաղը վրան ճգած անվարտի վայրենի մարդը, մէյ մըն ու կոչա հագուստած ազնուական երիտասարդ մը։ Աս աարտազագործական ճարտարութիւնը հրացը կը գործէ կոր, ուրիշ բան չըսուիր։ Մեքենան է ընօղը։ մէյ մ'ալ գեղագործները։

Տ. — Յնալցյծները կամ գիտուններն ըսէ։ Արդարեւ, Տարազագործական ճարտարութիւնք — ըստ Տիւնօայյէյի — իրաց կրել կու տան ամենէն այլազան կերպարանավոխութիւններն՝ միմիայն մեքենական կամ բնալուծական զօրութեանց գործածութեամբ։ Այս կերպով կը բացատրուի նոր ժամանակաց մէջ այս տարազագործական ճարտարութեանց ստացած մեծ զարգացումն եւ ընդարձակումն, երբ մանաւանդ իրենց գիտական իմաստով առնենք մեջենական եւ բնալուծական բառերն։ Երբ գիտութիւնք տակաւին ծագում առած չեն, երբ մարդս օրն օրին կ'առլրի՝ վայրի ծառոց պըտուղներով եւ որսորդութեան արեւամբք սնանելով, կենդանեաց մորթով ծածկուելով ու քարայրներու մէջ պատըսպարուելով, այս վիճակին մէջ անտարակոյս չը սպասուիր որ մարդ պարապի տարազագործական ճարտարութեամբք։ Այս անասոնական վիճակէն ու վայրավատին կեանքէն՝ կ'անցնի տակաւ հոգագործական ու հովուական վիճակի, աւելի կամ պակաս կայուն կեանքի։ Մարդս անդամ մը հողին վրայ հաստատուելէ ետեւ է որ՝ կամաց կամաց ծնունդ կ'առնուն տարազագործական ճարտարութիւնք, որոց թիւն՝ ինչպէս կ'ըսէիք՝ անհամար է։ Բարիզի Առեւտրական Սենեակն՝ 1849ին քննութիւն մը կատարելով գտաւ թէ 325 աեսակ տարազագործական արուեստք կային միմիայն այդ քաղաքին մէջ։

Պ. — Ես բան մը կը մամտամ։ Հիմայ որ արհեստները, ըսել կ'ուզեմ տարազագործական ճարտարութիւնները այսքան շատցած են, հողագործները պակասած ըլլալու են։

Տ. — Ճիշդ է։ Տնտեսագիտութեան մէջ հաստատուած օրէնք մ'է Հողագործական բաղաբակրութեան ձգտումն ի փոխարկի աւրատագործական բաղաբակրութեան (La tendance de la civilisation agricole à se transformer en civilisation industrielle)։ Արտերը կը պարպուին միշտ գործարանները միշտ կը լեցուին։ գիւղօրէից ժողովուրդն օր աւուր կը նուազի, քաղաքաց ժողովուրդն օր աւուր կ'աւելնայ։ Այս իրօղութիւնը վիճակագրութեամբ կը հաստատուի։ Այսպէս, 1861ին իրենց նահանգը մնացած կամ հոն վերադարձած Գաղղիացւոց թիւն 100ին 88, 24 էր։ 1866ին 87, 45 էր։ Պատերազմէն անմիջապէս յետոյ 84, 97ի իջած էր։ այսօր 83, 74 է։ Իվ կիւյօ անտեսագէտան, որ իր Տնտեսական զիտութիւնն (1) գրքին մէջ (1881) յառաջ կը բերէ սոյն վիճակագրութիւնը, գիւղերէն ի քաղաքս գաղթման այս վերելական շարժումն հետագայ պատճառին կը վերընծայէ։ «Այժմեան հողագործութեան մէջ, մեքենայից գործածութիւնը սահմանափակ ըլլալով, մարդուս արտադրական կարողութիւնը տկար է։ Մարդս այժմ գիտէ թէ տունկի մը նման այլ եւս հողին կապուած չէ։ Երկաթուղին իր քովէն կ'անցնի, եւ գիտէ թէ կրնայ տեղափոխիլ, երթաւ ուր որ ամենէն աւելի արժանք ունի»։ Այժմ անցնինք յաջորդ ճարտարութեան։

Պ. — Այսօր այսքանը բաւ համարինք, կաղաչեմ։ Ես կ'ուզեմ քիչ սորվիլ, բայց այդ քիչը պահելու կերպով սորվիլ։ Զէ նէ մեր գլուխան տղոց պէս կ'ըլլանք, անցեալ ամսուան սորվածին այս ամիս չը գիտեն։ Այսօր սորվեցաց Տարագործական ճարտարութիւնը. կ'օգտէ։

Տ. — Շատ աղէկ։ Սկզբունքնիդ լաւ է։ Ուրեմն ի կրկին տես։

(1) Կը զգուշացնենք նորուսներն անունն իմացած գրեթենին առնել կարդալէ. խառնիխուռն ընթերցումներէ կը վնասուին մանաւանդ քան կ'օգտուին։ Կը յանձնարարենք ընդհակառակն որ հայթայթեն Ռարէի Առ ձեռն բարյական իւ բաղաբական սնտեսութիւն ուկեղինիկ զիրքն, որ հայ լեզուի մէջ ալ ընտիր թարգմանութիւն մ'ունեցած է շնորհիւ արդիւնաշատ Միիթական Միաբանութեան Վենեսկու։

Վարդակ. — Ժամանակին սղութեան պատճառաւ չը կրցայ Տնտեսագիտութեան գ. Դասին փորձն ուշադրութեամբ կարդալ: Սոյն դասին մեջ սպրդած տպագրական մսալներն են՝ էջ 44, տող 23, պէտք է կարդալ. «Պ. — Ե՞ս ըսեմ...» Սոյն հարցման պատասխանին մեջ այ «Եւ դուք զիտեք»ը պէտք է կարդալ «Եւ դուք գտնեք տնտեսագիտութեան ճշմարտութիւններն»: «Շետքնետն զրած են զայնս»ը՝ «գտած են»: 46 երեսին մեջ այ փախած տող կայ. «Սա զրասեղանը առեղծուած է՝ չեմ կրնար ըսել, անոր մետաղ գետնին տակը կար արդէն.» պէտք է կարդայ «Սա զրասեղանը բատեղծուած է՝ չեմ կրնար ըսել, անոր փայտը անտարին մեջ կար արդէն. սա երկար զրիչը սաեղծուած է՝ չեմ կրնար ըսել, անոր մետաղ գետնին տակը կար արդէն:»

Ե.

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ^(*)

Անցեալ փոքրիկ յօդուածով բնակութիւնն հաստատելու յարմար վայրը առողջապահական տեսակետով որոշեցինք. ընթերցողները եթէ Վէլի էֆէնտիէն դէափի Եէտի-Քուլէյի Ազգ. հիւանդանոցը տարածուող ընդարձակ դաշտը աչքէ անցընեն, անշուշտ պիտի համոզուին որ այդ վայրերը բնակութեան ամեն յարմարութիւնները ունին. մաղթեմք որ «Արեւելեան Տնտեսական Միութիւն» անուամբ կազմուած 500 իշափ նոր հողատէրներու խումբը այդ տեղերէն օգուտ քաղելով կարող ըլլան թէ առողջարար եւ թէ հաճոյական դրութեամբ բնակարաններ հաստատել նախապէս լ'նելիք կարգադրութիւններու համաձայն: Յայտնի է թէ բնակութեան վայրը ըստ տնտեսական պահանջմանց մարդոց գործի տեղէն պէտք է միայն կէս ժամ հեռաւորութիւն ունենայ եւ այդ Միութեան որոշած վայրէն մինչեւ Շուկայ կամ Ղալաթիա շողեկառքով այդքան հեռաւորութիւն իսկ չի կայ. ուստի դառնամք թուել անցողակի թէ տան մը շէնքը ինչպէս կառուցանել պէտք է որպէս զի ողջապահիկ կանոնաց հա-

(*) Տես Տնտեսի Գեկտեմբերի թիւը՝ երես 59^o որոյ վերջին 5րդ առողջ գտնուած «ածխածին» բառը պէտք է բլայ «քրուածին»:

մաճայն եւ հաճոյական ըլլայ : Նախ պէտք չէ ացքէ վրիպիլ որ համայն զիւղին օդաւէտ ըլլալը չի բաւեր հոն շինուելիք տան մը առողջարար ըլլալոն, այլ նոյն իսկ շէնքին դիրքն և գեանէն ունեցած բարձրութիւնը զիսաւոր պայմաններն են այդ մասին : Քիչ մը դէա՞ 'ի Արեւելը և Հարաւնայող կամ Արեւելեան եւ Հիւսիսային հովերու դէմ պաշտպանուած վայրեր յարմար դիրքեր են բնակութեան . նոյնակս շրջակայ գետնէն բարձր շինուած տուն մը թէ առողջարար և թէ միանգամայն դիմացկուն կըլլայ : Ասկից ետքը կարզը կուզայ շինութեան զործածուելիք նիւթերուն, որոնք պէտք է ըլլան շէնքը խոնաւութենէ զերծ պահող տեսակներէն . տանը պատերը ըլլան հաստ և շինուած աղէկ քարէ : Քարահանքէ նոր հանուած քարերը, ուուլոս ըսուած պատի քարերը և քաները և այլն անյարմար են շինութեանց զործածուելու, վասն զի անոնք խոնաւութիւնը շուտ կ'ստանան և զայն երկար ատեն կը պահեն . իսկ ընդհակառակը կիրէ շաղախով ծեփուած աղիւսները աւելի ընդունակ են չորութիւնը եւ տաքութիւնը պահպանելու : Խնամով եւ հաստատուն ծածկոյթով շինուած փայտաչէն տուները ներսի օդը ցրտէն, ջերմութենէն են խոնաւութենէն ազատ պահելու մասին նախընտրելի են, քայց անոնք ալ հրդեհէն զերծ չ'ըլլալուն և անոնց ապահովութեան ծախքը ծանր ըլլալուն՝ դարձեալ քարաշէն կամ կէս քարաշէն աները պէտք է նախընտրուին :

Բնակարասնին ստորին հարկը պէտք է մօտակայ գետնի երեսէն առնուազն ՅՕ ասնդիմէթր բարձր և կամ լաւ եւս զանազան ուղղութեամբ բացուած լոսանցքներու միջոցաւ շարունակ օդաւէտ մառանի վրայ շինուած ըլլայ : Աւելի աղէկ ձեւ մ'ալ կէս գետնափոր յարկ մը ունենալն է, որով կարելի կըլլայ գետնայարկը 4 էն մինչեւ $1\frac{1}{2}$ մ.թր բարձրութեամբ շինել . այս յարկը եթէ շատ խոնաւ չէ, կրնայ խոհանոցի, շտեմարանի, փայտանոցի եւայլն զործածուիլ, մօտը գտնուած գետնի երեսէն վար շինուած և կամ մէկ կողմը

բարձր գետնի կոթնած ընսկարանները զրեթէ միշտ վատառողջ են մանաւանդ եթէ տանը բակը շինականաց տներուն մեծ մասին պէս բարով ծածկուած չ'է :

Մեծ ուշադրութիւն ընելու է որպէս զի տանը ծածկոյթը (չաթթն) հաստատուն ըլլայ և հով և անձրեւ չթափանցեն տան մէջ : Առաստաղներուն բարձրութիւնը պէտք է առ նուազն 2 մէթր 75 սանթիմ ըլլան . դռները և պատուհանները պէտք է այնպէս շինուին որ օղը և լուսը ազատապէս մուտ գտնեն ուստի լաւագոյն է որ թուով քիչ բայց խոշոր ըլլան : Պատուհանները առ նուազն 1 մէթր լայնութիւն եւ 1 մէթր 50 սանթիմ բարձրութիւն ունենան և գետնէն 60 կամ 80 սանդիմէթր վերէն բացուին . տան ներսի դռներուն լայնութիւնը պէտք է 75 սանդիմէթրէն մինչեւ 1 մէթր եւ բարձրութիւնը 2 մէթր, իսկ դրսիները աւելի լայն կըլլան : Տան ներքին ձեւը և բաժանումները ամէն մարդու իւր ճաշակէն կախում ունի, ուստի այդ մասին կանոն մը չ'կրնար ըլլալ . սակայն պարտիզ ունեցող տուներուն հիւրընկալութեան եւ կերակուրի սենեակները պարտիզի կողմ լինելը աւելի վայելուչ է :

Յ. Պ.

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ (Բողիցա, Քամպիա)

Փոխանակագրոց վրայ մի քանի համառօտ տեղեկութիւններ տալով օգտակար ծառայութիւն մը մատուցած ըլլալ կը կարծեմ՝ մանաւանդ մեր գաւառաբնակ արիւնակցաց, որք շատ անգամներ անհմուտ օրինաց երբեմն փափուկ կէտերուն, անդիտաբար վնասներու եւ պատասխանառութեանց կ'ենթարկեն զիրենք, այդպիսի խնդրոյ մը առթիւ որոյ գրեթէ միշտ պէտք կ'ունենան դիմելու :

Յայտնի է թէ այդ անտեղութիւնք երբէք յառաջ պիտի չգային եթէ օրինաց համաձայն գործադրուէր ամեն րան :

Տեսնեմք ուրեմն թէ օրէնքը լինչ կը արամադրէ :
 Անձ մը որ իւր քով ունեցած դրամին մի մասն կը փափի զրկել հեռաւոր տեղ մը իւր ընտանեացը կամ բարեկամին եւ կամ պահանջառիրոջը, յուղարկելի գումարը ճամբորդութեան վոանգներուն չենթարկելու համար, պէտք է դիմէ իւր եղած տեղը գտնուող սեղանաւորի մը եւ կամ վստահելի ճամբորդի մը : Եթէ այդպիսի ճամբորդ անձ մը կայ ինդիրն շատ կը դիւրանայ : Կը բաւէ որ այն ժամանակ պէտք եղած գումարը տայ այդ ճամբորդին՝ որպէս զի համապատասխանող գումար մը յանձնէ որոշեալ անձին : Նոյնպէս կարելի է խնդրել սեղանաւորէն որպէս զի իրեն արուած գումարին փոխարէնը հատուցանել տայ իւր մի ծանօթին ձեռօքը պէտք եղած անձին : Այս գործողութիւնք՝ որք դրամը զրկողին եւ դրամը յանձնողին (կամ հատուցանել առողջին) միջեւ տեղի կունենան տեսակ մը յանձնարարութիւն են եւ կը կոչուին դաշինք փոխանակութեան (contrat de change) :

Բայց փոխանակագիրը յերեւան գալու համար երրորդ անձի մը ներկայութիւնն անհրաժեշտ է : Առանց անոր ըստ օրէնքի միայն պարզ յանձնարարութիւն մը, ինչպէս ըսի, կրնայ ըլլալ :

Որովհետեւ իմաստ քիչ անգամ այդպիսի ճամբորդի մարդ տոիթ կունենայ պատահելու, մանաւանդ ճիշտ իւր ուղած ժամանակին, աւելի դիւրին է դիմել սեղանաւորին կամ դրամատանց որպէս զի հրաման ընեն իրենց ընկերոջ կամ գործակատարաց որոշեալ գումարը որոշեալ անձին տալու համար : Այդ ընկերը կամ գործակատարներն, որք այս կերպով կը պարտաւորին վճարումը գործադրելու, ճիշտ այն անձն կը ներկայացնեն որոյ ներկայութիւնն անպատճառ պէտք է կըսէի փոխանակագրոյն ստեղծմանը համար : Արդ այս երեք անձինք մասնաւոր անուններ ունին : Այն սեղանաւորը՝ որ վճարելու հրամանը կը տայ իւր ընկերոջ կանուանուի ժաշող (tireur) . այն որ այդ հրամանը կընդունի վճարող (tiré) . գալով այն անձին որ դրամը պիտի ըստանայ վերջապէս աղոր անունն է իրող կամ skr (porteur) :

Այժմ պէտք է ըսել թէ ինչպէս պէտք է շինուիլ փոխա-

նակագիրը։ Ենթադրելով որ ես 10 մակի զրկել փափաքիմ ի կարին Յովհաննէս եղբօրս (տէր, կրող), պէտք է ուրեմն որ տամ այդ տասն ոսկին աստ բնակող սեղանաւորի մը, Գրիգորին (քաշող), որ կարին գտնուող իւր ընկերոջը, Պօղոսին (վճարող), պիտի հրաման ընէ թղթով մը որ ինձ կը յանձնուի։ Այդ թուղթը փոխանակագիրն է եւ պէտք է գրուի այսպէս։

Կ. Պոլիս, 4 Մարտ 1887

Օսմ Ռոկի 10

Վճարէ, Ա.ալրիլ 4 ին (1887) Յովհաննէսի հրամանին Տարըն ոսկի օսմանեան։ Փոխարէնն ընկալայ գրամով։

Գրիգոր

Առ Պօղոս, Կարին։

Ա.հաւասիկ փոխանակագիրն։ Յաջորդ յօդուածով մը պիտի քննեմ թէ փոխանակագիրը ինչ թերութիւններ կրնայ ունենալ, եւ թէ այդ մասին օրէնքն ինչ կը տրամադրէ։

Ե. Շ.

ԿԱՐԻ ՄԱՔԻՆԱՅԻ ՎՐԱՅ

... Խմբագրապետ,

Կերեւոյ թէ արժան չի գատեցիք իմ առջի գրած նամակս (¹) հրատարակել, գուցէ այն պատճառաւ որ դուք ալ կարի մաքինայի գործածութիւնը առողջապահութեան եւ տնտեսագիտութեան հակառակ կը նկատէք ինչպէս որ գրած է Մեծ։ Տօքթօր իւթիւնեան էֆինտի։

Յիրաւի ուր հմտւ բժիշկ մը կը խօսի առողջապահական խնդրոյ մը վրայ, նոյն ուսուման անտեղեակ անձինք պէտք է լուեն, բայց եւ այնպէս կը յուսամ թէ փորձառութիւնն ալ իր կողմանէ միշտ իրաւունք մը ունի խօսելու, մանաւանդ միթէ գիտնականաց ամեն կարծիք ընդհանրութեան համար ընդունելի կրնա՞ն ըլլալ երբ փորձառութիւնը զայնս չի վաւերացնէ։

(1) Յիշեալ նամակն արդեն հրատարակուած է Տիեզերական ախորդ թըւոյն մէջ։

Դ. Ա.

Ժամանակ մը բժիշկներն մօսս հանեցին թէ կերակուրը լաւ մարտելու համար պէտք է մարդիկ ճեմեն, գործեն կամ այլ մարմնամարդութիւն մ'ընեն. կը յիշեմ թէ շատեր տար հետեւելով կերակուրէ ետքը կը վազուըռտէին կամ այլ մարդանք կ'ընէին. տարիներ անցան՝ յետոյ բժիշկներն ալ համոզուեցան՝ ինչ որ մեր նախնիքն արդէն գիտէին, թէ կերակուրէ ետքը տէտք է հանդիստ ընել կարենալ լաւ մարտելու համար։ Ժամանակ մ'ալ բժիշկները պաղ ջուրով կը դարձմանէին աչքի հիւսնդութիւններն. եւ սաստիկ կը պախարակէին այն մայրերն որք իրենց զաւակաց հիւանդ աչքերն տաք կերպով կը խնամէին. այժմ բժիշկները մինչեւ անդամ եռացող ջուր կը գործածեն աչքի բժշկութեան համար։ Այսպէս շատ պարագայներ եղած են եւ անտարակոյս պիտի կրնան ըլլալ միշտ որ գիտնոց կարծիքը չի կրնայ հաստատուիլ փորձառութեան առջեւ։

Այն կարգէն է կարծեմ Տօքթօր իւթիւնեան էֆէնաիի տեսութիւնը թէ կարի մաքինան վնասակար է իգական սեռին եւ թէ անոր գործածութիւնը զանազան հիւանդութեանց պատճառ կրնայ ըլլալ։ Ես իրեւ փորձառու կին, չեմ կարող ընդունիլ այդ տեսութիւնը. յիշած եմ նախորդ գրութեանս մէջ թէ տեսներեք տարիէն աւելի է կարի մաքինա կը գործածեմ. նոյնպէս իմ զաւակներս եւ ծանօթներէս խիստ շատերն կը գործածեն. բայց՝ փառք Աստուծոյ, ոչ անձիս, ոչ զաւակացս եւ ոչ ալ ինձ ծանօթ տիկնանց եւ աղջկանց վրայ տեսած եմ կարի մաքինայի այն վնասակար ազդեցութիւններն զորս Տօքթօր իւթիւնեան էֆէնտի կը թուէ. միայն թէ պէտք է յիշեմ որ իմ գիտցած անձինքս ամենքն ալ ձեռքի մաքինա կը գործածեն եւ չի կայ անոնց մէջ մէկը որ օրը 8 ժամէ աւելի աշխատի. ուստի գուցց Տօքթօր իւթիւնեան էֆէնաի ըսածը ոտքի մաքինայի վերաբերի. յիրաւի ես ալ լրած եմ թէ ոտքի մաքինան աղջը կամ մանաւանդ՝ ինչպէս որ Եւրոպայի գործարանաց մէջ աեղի կ'ունենայ, օրը 10—14 ժամ աշխատողաց համար աղէկ չէ կ'ըսեն, բայց որ աստիճանի ստոյգ ըլլալը չեմ գիտեր. փորձով իմ գիտցածս սա է թէ՝ ձեռքի մաքինան շա-

վառոր գործածութեամբ բնաւ չի վնասեր մէկու մը :


Գալով անտեսական տեսակեալին՝ երբ մարդ ուժ օրուան ձեռքի գործը կարող կը լլայ մէկ օրուան մէջ եւ աւելի շուտով կատարել, կարծեմ անտեսագիտութեան դէմ մեղանչած չի լինիր :

Կարի մաքինայի մասին հակակարծիք ըլլալով հանդերձ կը յարգեմ միշտ Մեծ. Տօքթօր իւթիւճեան էֆէնաիի գիտութիւնը եւ մարդասիրութիւնը. քանզի նա միշտ անձնուէր աշխատած է յօգուտ ընդհանրութեան: Աւսաի եւ ներողամսութիւն խնդրելով ներկոյ համարձակութեանս,

Մնամ՝ խորին յարգանօք

Սամարիա,

ՄԱՅԻՍԻ ՀՅՈՒՅՆԻ ԽՍԱՅԱՅՆ



ՊԱՏԱՍԽԱՆ ԹԻՏԱՆԻ ՀԱՐՑՄԱՆՑ

Պատասխան թիւ 10 հարցման. — Տուն մը կամ սենեակ մը վարձելու համար քանի տարուան որ ուզես կրնաս ըստ օրինի պայմանագրութիւն կնքել բաց ի վազլիներու միւթելլիյին որ 5 տարուընէ աւելիի համար իր կալուածը վարձու չ'կրնար տալ:

Պատասխան թիւ 11 հարցման. — Թուրքիոյ մէջ կալուած մը օտար տէրութեան հարատակի վրայ կրնայ դառնալ պայմանաւ որ. 1^o, Այդ տէրութիւնը այդ մասին 7 Սէփէր 1284 թուականաւ հարատարակուած օրէնքը ընդունած ըլլայ, (լաւ կը յիշեմ որ արդէն Աւստրիա, Ֆրանսա, Անդզիա, Գերմանիա, Շուէտ եւ Նորվէկիա, Պէլմիդա, Տանիմարդա, Արանիա, Բօրթուգալ, Իտալիա, Պարսկաստան ընդունած են այդ օրէնքը): 2^o. Կալուածը Հիմազի գաւառին մէջ չ'գըտնուի: 3^o. Այդ օտարահարատակ անձը առաջ թուրքիոյ հարատակ ըլլալով առանց տէրութեամ հաճութեան իւր առջի հարատակութիւնը ձգած չ'ըլլայ: 4^o. Կալուածի մասին նոյն իսկ թուրքիոյ հարատակի պէս բոլոր օրինաց հարատակի եւ գատը սովորական դաստարաններու առջեւ տեսնուի:

Յ. Պ.

ԿՈԿԻԿ ԿԱԼՈՒՄՄԱՏԵՐԸ

Կոկիկ կալուածատէրը անշուշտ իւր վարձակալին հետ ունեցած յարաբերութեամբը պիտի կանոնաւորէ օրինաւոր պայմանագրութեամբ որպէս զի ըստ կարելոյն սպահով ըլլայ իւր վարձուց զանձման. այս երկրին մէջ շատ կալուածատեարք կը զանգատին իրենց վիճակին զի շարունակ դրժուարութեանց կը հանդիպին իրենց վարձակալներուն հետ. սակայն պատճառը իրենց անուշաղրութիւնն է. տես կոկիկ կալուածատէրը ինչպէս իւր զործը կարգի կը բռնէ. բերանացի պայմաններու չի մտներ. զրաւոր պայման կը դնէ և ըստորագրել կուտայ իւր վարձակալին կալուածական վարձուց պայմանագրութեանց համար ամեն մէկ օրինակին մէկ զրշի դրոշմաթուղթ (փուլ) կը փակցնէ և թուականի և իւր ստորաթեան մէկ մասը անոր վրայէն կանցնէ որպէս զի վերջը մէկին տեղ հարիւր դրշ տուզանք չի տայ. ասկէց զատ քօննիւթի տուրքի համար իւր կալուածին գտնուած թաղապետութեան շրջանակին յատուկ ուրիշ տեսակ մը դրոշմաթղթէն ալ կառնէ վարձքին հարիւրին մէկ համեմատութեամբ և միւս դրոշմաթղթին (վարազայի բուլին) բով կը բակցնէ զայն ևս թուականով և ստորագրութեամբ չնշելով որպէս զի եթէ ետքը վարձակալը ցիճարէ կամ որոշեալ ժամանակին կալուածէն չ'ելլայ ինքը կարող ըլլայ քանի մը օրէն զայն իւր կալուածէն զուրս հանել կառավարութեան միջոցաւ առանց դատարանի դիմերու և բացէն ծախքեր ընելու և մասնաւանդ առանց հարիւրին երեքի հաշուով տուզանք ևս տալու : Կոկիկ կալուածատէրը վարձակալութեան օրէնքը մասնաւորապէս լաւ մը կը սովորի. կը զիտնայ թէ իւր կալուածին մէջ գտնուած կարապիք ևայլն, ևայլն. վարձուց ամբողջովին զանձման համար իւր ձեռքը զրաւ են. ուստի թող չի տար որ վարձակալը առանց իւր պարտքը վճարելու զանոնք դուրս հանէ. այն զիտէ թէ որ և է պայմանագրութեան մէջ գտնուածէն դուրս պայման չ'ընդունուիր, ուստի ամեն կարեւոր պայ-

մանները չ' մոռնար անոր մէջ զրելէ. զիտէ նաև թէ իւր վարձակալը երբ որ մեռնի պայմանագրութիւնը օրինօք չնշած կըլլայ. ուստի այս դէպրը պատահելէն քիչ վերջը իւր նոր վարձակալներուն հետ կը նորոգէ պայմանագրութիւնը. զիտէ վերջապէս թէ վարձու պայմանաժամը չի լրացած իւր կալուածը ուրիշին ծախելու անտեղութիւններ ունի. ուստի կամ պայմանագրութիւնը չնշելու մասին վարձակալին գրաւոր հաճոյըը և կամ այդ պայմանագրութիւնը ընդունելու մասին կալուածը ծախու առնողին ստորագրութիւնը կանխաւ կառնէ. զիտէ նաև որ եթէ իւր կալուածը այրի, տակաւին չըըռնած վարձքն ալ վարձակալին ետ դարձնելու կը պարտաւորի. ուստի այս կրկին մնասներէն գերծ մնալու համար չ' վարանիր կալուածը միշտ ապահովագրութեան տալ մանաւանդ երբ բարուկիր է կալուածը. զի բարուկիրին ապահովագրութեան ծախքը փայտաշէնէն քիչ ըլլալուն վայրկեան մը անապահով մնալ չ' արժեր : Նաև անհոգ չի մնար, իւր կալուածին հաստատութեանը մասին քիչ մը աւրուած տեղերը անմիջապէս կը նորոգէ, որպէս զի վաղը անոր թերեւ տասնապատիկը ծախսելու չ' պարտաւորի :

Օ. Պ.

ԶՈՒՐՆ՝ Ի Բ ՐԵՒ Ը Մ Պ Ե Լ Ի

Անօթութիւնն յագեցնելու համար կարելի է գործածել բազմաթիւ զանազան սնունդներ, սակայն ծարաւն հանդարտեցնող հեղուկն՝ ջուրն միայնակ է իւր տեսակին մէջ: Ջուրն անհրաժեշտ է կենաց տեսողութեան համար: Մարդկանց կողմէ հնարեալ այլեւայլ ըմպելիներ կրնան հաճոյ լինիլ ճաշակի, գրգռել գործարաններն, բայց նոցա օգտակարութիւնն կախում ունի իրենց պարունակած ջրէն. ուրեմն ամենաընտիր ըմպելին միայն ջուրն է:

Սակայն պէտք չէ կարձել թէ երկրագնտիս երեսն գըտնուող ամեն տեսակ ջուր յարմար է իրեւ ըմպելի գործա-

ծելու : Բմպկելի ջուրն պարտի ունենալ խել մը յատկութիւններ , առանց որոց ջուրն օգտակարութիւն չ'ունենալէ զատ , վկասակար իսկ կը լինի առողջութեան :

Իբրեւ ըմպկելի գործածելի ջուրն պարտի լինիլ փայլուն , անգոյն , անհոտ , զով՝ առանց պար լինելու , հաճոյահամ՝ առանց հոտած , կծու , աղի կամ անոյշ լինելու , պարտի դիւրաւ խաշել բանջարեղջներն՝ առանց պնդելու զ'այնս եւ փրփրեցնել աճտռն : Ասոնցմէ զատ պարտի պարունակել օդ՝ որոց ներկայութեամբ ջուրն կը լինի առելի թեթեւ եւ դիւրամարու :

Ամենամաքուր ջուրն՝ անձրեւի ջուրն է : Ծովի ջուրն՝ ջրոց մաքրութեան ասորնագոյն աստիճանն կը գրաւէ . բաց ՚ի սսվորական աղէ , ծովի ջուրն կը պարունակէ խել մը օտար նիւթեր՝ զ'որս գետերն եւ այլ հոսող ջրերն իբենց հետ կը տանին դէպ ՚ի ծով :

Այսու հանդերձ պէտք չ'է անխտիր գործածել անձրեւի ջուր պարունակելու յատկացեալ ջրամբարներու (սարնըն) ջրերն : Ջրամբարներն պարտին լինիլ լսւ շաղախեալ ՚ի ներքուստ , ոչ թէ միայն ջրոց խուսափումն արգիլելու , այլ որ առաւելն է , արտաքին եւ ընդհանրապէս աղսոս ջրոց ներածման առաջքն առնելու համար : Պէտք չ'է թողուլ որ լցոն մտնէ ջրամբարներու մէջ . լուսոյ ազգեցութեամբ ջուրն կ'առնէ մի թեթեւ կանաչ գոյն (մանրագիտական բոյսեր) եւ կը լինի վիսսակար առողջութեան : Սոյն պայմանաց ներքեւ գանուող ջրամբարի ջուրն խիստ յարմար է լուացք ընելու եւ բանջարեղջն խաշելու , բայց եւ այնպէս ուրիշ յարմարագոյն ջրեր չգտնուած ժամանակ միայն պէտք է իբրեւ ըմպկելի գործածել զ'այն :

Ինքնին գետնէ բխող ջրերն (ակունք) ընդհանրապէս զով եւ պայծառ կը լինին . սոքա լսւ անուն կը վայելին , սակայն շատ քիչեր արժանի են այս անուան : Այս տեսակ ջրոյ ըմպկելիութեան աստիճանն կը փոխուի հողին տեսակին համեմատ , հետեւաբար պէտք չ'է գոհ լինիլ միայն զովութեամբ եւ պայծառութեամբ , այլ պէտք է վինտուել նաեւ ըմպկելի ջրոց այն ամեն յատկութիւններն՝ զ'որս քիչ մ'առաջ թուեցինք :

Գետերու ջրերն՝ որք մեծամբ մասսամբ անձրեւի ջրէ կը բազկանան, լաւագոյն են քան խել մը գետնէ բխող ջրեր։ Սակայն փոթորկաց, տեղատարափ անձրեւոց եւ հեղեղներու ժամանակ գետերու ջուրն չուառվ կը պլառի, զայս փորձով գիտեն այն ընտանիք՝ որք աղբիւրի ջուր կը գործածեն. որպէս յայտնի է, աղբիւրի ջրերն՝ պարզապէս գետի ջրեր են, որք արգիլուելով իրենց ճամբուն վրայ, կը մտնեն ընդերկեալուայ խողովակներու մէջ եւ կը բաժնուին քաղաքաց ամեն կողմն։

Պլառը ջրերն կը պարունակեն կաւի, հողի ամենանուրբ մասնիկներ՝ որք դիւրաւ կը զատուին կամ հանգստեամբ կամ զտմամբ (սիւզմէք)։ Առաջին միջոցն խիստ պարզ է եւ չունի ոեւէ անպատեհութիւն. պէտք է հանգիստ թողուլ ջուրն բաւական ժամանակ մինչեւ որ յիշեալ առկախ մասնիկներն իջնեն ամանին յատակն։ Երկրորդ միջոցն առելի արագ է եւ կը գործածուի յաճախ. պէտք է անցնել պլառը ջուրն՝ ծակուկէն քարէ։ Այս նպատակաւ շինուած գործիքներ կան՝ որք կը կոչուին պարզուա (սիւզկէձ)։ Այն ընտանիքներն՝ որք պարզուա չ'ունին, խիստ գործուած կտաւէ անցնելով կը զտեն պլառը ջրերն, բայց ասի բաւական չ'է։

Զտեալ ջրերն փայլուն, պայծառ կը լինին, սակայն անմիջապէս կամ քիչ ժամանակ վերջը կրնան առնուլ մի մասնաւոր հոտ եւ գոյն՝ որք խիստ վլաստակար են առողջութեան. հետեւարար զգուշութիւն ընելու է այս մասին եւ զտեալ ջրերն անմիջապէս գործածելու է։

Հոփնք թէ ջուրց ըմպելիութեան պայմաններէն մին ալ օդոյ ներկայութիւնն է. ահա այս պատճառաւ է որ, միեւնոյն պայմանաց ներքեւ, ջրվէժներ ունեցող գետի մը ջուրն՝ պարզապէս հոսող գետի մը ջրէն եւ ծեծուող ջրամբարի մը ջուրն՝ չը ծեծուող ջրամբարի մը ջուրէն առելի լաւ է։

Գալով ջրոց բարեխառնութեան, ջուրն խմուած ժամանակ, պարտի լինիլ ոչ չափազանց տաք՝ ոչ չափազանց պաղ, այլ զով. ձմեռն պէտք է խմել ընտանեաց նստած սենեկին մէջ բաւական ժամանակ կեցած ջուրն եւ ամրան պէտք է պարզապէս թաց լաթով պատել խմելու ջուրն պարունակող

ամանն։ Ասուի միջոցաւ պաղած ջուրն վնասակար է, բայց անպատճառ զ'այն խմել ուզողն գէթ հոգ տանելու է որ խմած ժամանակ ստամքսն պարապ չը լինի։ Տաք ըմպելիներն քրտնեցուցիչ գեղերու ամենակատարեալներն են, սակայն իրեւ ըմպելի ջուր չ'են կարող ծարաւն անցընել։

Պէտք չ'է խմել ջուրն չափազանց քանակութեամբ։ Ջրոյ չափազանց քանակութիւնն կրնայ օդտակար լինել մասնաւոր պարագայներու մէջ, սակայն յաճախ ապագային համար ստամքսի ցաւեր կը պատրաստէ։

Ջուրն կրնայ խմելիլ ծարաւ զգացուած ժամանակ, սակայն մարսողութեան շրջանին մէջ այսինքն ճաշէ եւ ընթրիքէ վերջ առնուազն մինչեւ երեք ժամ ջրոյ գործածութիւնն կրնայ խանգարել մարսողութիւնն։ Ճաշի եւ ընթրիքի ժամանակ՝ կերակուրներու հետ, կարելի է խմել եւ օդտակար ալ է։ Քրտնած մարդիկ զգուշանալու են անմիջապէս ջուր՝ նամանաւանդ պաշ ջուր խմել։

Կը վերջացնեմ յօդուածս, յուսալով որ ըմպելի ջրոյ վրայ տրուած սոյն համառօտ տեղեկութիւնք կրնան օդտակար լինիլ ընթերցողին եւ առաջնորդել զ'այն ըմպելի ջրոյ ընտրութեան պահուն՝ որ խիստ կարեւոր է, վասն զի ջուրն՝ կենաց ամենահարկաւոր պայմաններէն մին է եւ վնասակար ու վատառողջ ջրոյ գործածութիւնն կրնայ, թէեւ ոչ անմիջապէս, բայց անվիշտ պատճառ լինել զանազն հիւանդութեանց։

Ա. • Գ. • Ա.

ԿԱՐՄԻՐ ՄԵԼԱՆ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԵՐՊԸ

125 կրամ տաշուած Պրէզիլի փայտ եւ 32 կրամ թարթարի աղ (sel de tartre) նոյնչափ ալ պաղլեղ (շապ) առ եւ ամենքը մէկ լիտր ջուրի մէջ եփէ մինչեւ որ կէսը մնայ, այն տաեն տաք տաք թղթէ անցընելով զաէ եւ 32 կրամ տրարական խեժ (զամք արապի) նոյնչափ ալ ճերմակ շաքար աւելցներ, աղէկ կարմիր մելան մը կ'ունենաս։ եթէ քիչ մ'ալ աղ խառնես լաւ կըլլայ. մելանը կեցած տեղը չի փորփուիր (քիւֆլէնմէզ)։

(Լա նարիւն)

ՊԻՏԱՆԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Սոյն վերնագրին տակ՝ սնտեսական, առեւտրական, դպրոցական, տնական, օրինական եւայլ պիտանի խնդրոց վերաբերեալ հարցումներ հանդէսիս մէջ հրատարակել որոշած ըլլալով, յօժարութեամբ պիտ' ընդունիմք մեր բաժանորդաց կողմանէ մեզ ուղղուած այս տեսակ հարցումներն ինչպէս եւ այդ հարցմանց տրուած պատասխաններն : Հարցմունք թէ պատասխանիր պէտք է համառօս ըլլան եւ պարզ լեզուաւ գրուած. հրատարակութեան արժանի չը համարուած գրութիւնք եւ չեն դարձուիր :

16. Բարեկամ մուշիմ 16 տարեկան, որ տեղւոյս (Մարտի) Ազգ. Կեդր. Վարժարանի շրջանաւարտ ուսանողներէն՝ ընդունակ, եւանդուն եւ յուսալի պատանի մ'է, Հայերէն հին եւ արդի լեզուաց բաւականին հմուտ, մաթիմաթիկական եւ բնական ուսմանց փոքր ի շատէ տեղեակ, Տաճկերէն քիչ մ'ալ Գաղղիերէն գիտէ. դարուս պահանջման համաձայն՝ կարող անձ մը յաջողակ ուսուցիչ մը ըլլալ կը փափաքի. աստ ուրիշ բարձրագոյն Ազգ. Վարժարան չկայ, մայրաքաղաքիդ վարժարանաց մէջ դաստիարակուելու համար դրամ չունի. արդեօք կարելի է միջոց մը դանալ:

Մարատ,

Ա. Գ. ՍՊ. ՄՈՒԵԼ. ԵԱՆ

Պատասխան Կեդրունական վարժարանին

17. Ես ալ դերձակ մ'եմ եւ Զեր ըսածին պէս ես ալ իմ մեծ տղաս քովս առած եմ եւ գոհ եմ. բայց երկրորդ տղաս՝ որ 16 տարեկան եւ սովորական դպրոցի մը ընթացքն աւարտած է, կը փափաքիմ ուրիշ գործի մը գնել. բայց չեմ կարողացած դեռ որոշել թէ ի՞նչ գործի. կարելի չէ արդեօք պատուական թերթիդ մէջ երբեմն երբեմն բանուկ գործոց վրայ տեսութիւն մը ընել կամ գոնէ անոնց մէկ ցանկն հրատարակել, որպէս զի ամենուն միտքը բացուի, քանզի ինձ նման խիստ շատեր կան շոււարած որք չեն գիտեր իրենց տղաքն ինչ ընեն:

Խւկիւտար,

Յ. Ե.

18. Լիրիսկայի տօնավաճառը արդեօք ո՞ր ամսուն տեղի կ'ունենայ, եւ երթալ դալու ի՞նչ ծախք կ'երթայ:

ՃԱ. ՄԲՈՐԴ. ՄԸ

Տ Ե Տ Ե ՍԻ ԲԱՐԵԿԱՄՔ

Տնտեսի հրատարակութիւնը սոսկ մարդասիրական գործ մը ըլլալուն՝ անոր օգնելն ալ մարդասիրութիւն է։ վասնորոյ միշտ չնորհակալութեամբ պիտի հրատարակենք անուններն այն պատուական անձանց, որք կը բարեհաճին օգնել մեր թերթի տարածմանը, նախորդներուն պէս՝ այսօր ալ, գոռ հանակութեամբ կը հրատարակենք հետեւեալ ցանկն։

Վաեւմաշուք Տիկին Սրբուհի Տիւսափ Փաշա, որ բարեհաճեցաւ նաեւ մէկ օրինակ Տնտեսի բաժանորդագրութիւն նուիրել՝ Դպրոցասէր Տիկնանց ընկերութեան։

Արալանեան Միհրան էֆ. Սամսօն

Գասաղարեան Կարապեա էֆ. Իզնիմիստ

Խրիմեան Անտօն Յ. էֆ. Խասդիւզ

Մարինեան Սիմօն էֆ. Վառնա

Սամուէլեան Ա. Գ. էֆ. Մարաշ

Սըլիեան Մինաս էֆ. Պարտիզակ

Տէր Կարապետեան Մ. Յարութիւն էֆ. Պարտիզակ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պօլսեցի ընտանիք մը՝ որ այժմ գաւառները՝ կը գտնուի, կը փախաքի իւր զաւակը՝ ուշիմ տղայ մը 12 տարեկան՝ մայրաքաղաքիս մէջ ժամագործի կամ այլ արհեստաւորի մը քով զիշերօթիկ աշակերտ տալ՝ լաւ արհեստ մը սովորելու համար։ ուզողը կրնայ տեղեկութիւն ստանալ մեր գրասենեակին։

Թէզիեահնարութեան, գրագրութեան, մաքսէ ասլրանք հանելու եւ այլ առեւտրական գործերու խիստ վարժ մէկը՝ լաւ յանձնարարութիւններով պաշտօն կը փնտոէ։ տեղեկութիւն գարձեալ մեր գրասենեակին։

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. Գ. Ա. Մարաշ. Փետրվար 9 նամակնիդ ստացանք,
մեծապէս չնորհակալ ենք Ձեր աշխատութեանցը համար,
Տնտեսէն պիտի զրկենք Ձեր հասցէին 11 օրինակ, որոց մէկը
նուէր է այն գարոցին համար, զոր գուք արժան կը գտ-
աէք. Տնտեսի հրատարակութիւնը մարդասիրական գործ մ'է
եւ անոր գործակալութիւնը պատուակալ պաշտօն մի. մեր
ցոյց տուածէն տարբեր պայմանաւ բաժանորդագրութիւն մի
ընդունիք:

Ա. Խ. Կիրասոն. Թամզարայի աղքատիկ ուսանողաց հա-
մար մէկ օրինակ Տնտես իրբեւ նուէր պիտի զրկենք Ձեզ.
շատ չնորհակալ ենք Ձեր բարի կամաց եւ աշխատութեանց
համար :

Գ. Ա. Գ. Երիկա. Տնտեսն՝ ցարդ ամեն ամսոյ վերջ կ'եւ-
նէր, երկու անգամ է որ երկամսեայ կ'ելլէ, եօթներորդ
թիւը պիտի ելլէ ապրիլ 20ին եւ ութերրորդը մայիս 15ին
եւ անկից յետոյ միշտ ամեն ամսոյ 15ին պիտի ելլէ. չնոր-
հակալ ենք Ձեր աշխատութեանցն համար :

Մ. Ա. Պարտիզակ. Նախորդ հրատարակուած ցուցակի
գլուխը եթէ կարդայիք, պիտի կրնայիք հասկնալ թէ միու-
թեան անդամոց վճարումներն մինչեւ գեկտեմբեր 27 նշա-
նակուած են, հետեւաբար անդ չըր կրնար գտնուիլ Ձեր
թիւն, զոր այս օրուան ցուցակի մէջ կը գտնէք. աէտք է
լաւ ուշադրութիւն ընել միշտ ցուցակի գլուխը նշանակուած
թուականին եւ շաբաթաթիւերուն. չնորհակալութիւն Ձեր
ջանիցը համար :


Մ. Ա. Սուլուխան. Արեւելեան Տնտեսական Միութիւնը
գտառներու մէջ ունի բաժանորդներ, որք սակայն ներկա-
յացուցիչ ունին ի Պօլիս. քանզի միութիւնը չի կրնար նա-
մակագրութեան մոռնալ մասնաւորաց հետ. Միութեան յայ-
տագիրը եւ կանոնագրութիւնը առանձինն հրատարակուած
բայց սպառած են. կրկին պիտի հրատարակուին Տնտեսի մէջ :

Յ. Ա. Գ. Շարդ չարշաք. Չնորհակալ ենք Ձեր բարի

կամեցողութեանցը համար . սիրով պիտի ընդունինք Զեր տեսակցութիւնը երբ որ կամիք . Զեր հարցումը չենք կրնար հրատարակել , քանզի սխալ է Զեր տեսութիւնը . Զեր գրութիւններն որչափ ալ պարզ ըլլան , մեղ ընդունելի կրնան ըլլալ եթէ Զեր ճշմարիս պեսթերն ներկայացնեն եւ շինձու ըլլան :

Ս . Գ . Ա . Պէտք է գիտնալ որ Տեսես պաշտօնական թերթն է Ա . Տ . Միութեան , որ նպատակ ունի տնտեսագիտութեան վարժեցնել մեր երկրին ժողովուրդն անխափ . առաջին պատեհութեամբ մեր թերթին Տաճկերէն եւ Յունարէն թարգմանութիւններն ալ պիտի հրատարակաւին , հետեւաբար չենք կրնար այնպիսի յօդուածներ ընդունիլ որք միայն մեր Ազգին վերաբերութիւն ունին :

Շ . Ուրախալի է Զեր եռանդը բայց ներելի չէ Զեր աճապարանքը այդ նիւթին վրայ կարծիք յայտնելու մասին . գալով Զեր հարցման , անորոշ հարցումներ չեն կրնար ընդունուիլ , քանզի որոշ պատասխան չի կրնար արուել անոնց . եթէ բանի մը պէտք ունիք , գրեցէք որոշակի :



ՀԱՅԱ

ԹԱՏԱՍԽԱՆ 14^{րդ} ՀԱՐՑՄԱՆ

Թէ ի՞նչ է պատճառն , որ Պօլսոյ օրիորդները բոլորն ալ ակար կըլլան եւ գիւղացի աղջկները զօրաւոր :

Պատասխան

- 1 . Քուսէ հագնելու խիստ վնասակար սովորութիւնը ,
- 2 . Նստուկ կեանք անցնելը ,
- 3 . Վարժարանաց մէջ մանաւանդ մարմինէն խիստ շատ աւելի եւ չափազանց ուղեղին հոգնելը ,
- 4 . Ժամանակին չամուսնանալը :

ՏՕՔԹՈՐ Մ . Բ . ԻՒԹԻՒՃԵԱՆ



ՊԱՏԱՍԽԱՆ 15^{րդ} ՀԱՐՑՄԱՆ

Թէ ո՞րն է աւելի վնասակար մարդուս համար օղին թէ ծխախոտը, եւ ո՞րն է աւելի վտանգաւոր մարդուս համար օղին թէ խազը:

Պատասխան

Այս հարցման չպատասխանած, յարմար կը դատեմ Ամերիկայի Միացեալ-Նահանգաց քահանայից թիւթիւն ծխելու չափազանց սովորութեան տէր ըլլալնուն առթիւ վիթ թալմէճ Քահանային խօսած ազդու քարոզին առողջաբանական եւ տնտեսական կտորը թէ հարցման տիրոջ եւ թէ բոլոր ընթերցողաց ուշադրութեան յանձնել:

«Ճողովրդեան մէջ թիւթիւն ծխելու սովորութիւնն աւելնալուն գլխաւոր պատճառն է, Քահանայից շատ ծխելը, որոնցմէ շատերն ոչ միայն ծխելով կը բաւականան, այլ եւ կը քաշեն (Էնֆլյէ) եւ կը ծամեն: Խեղճերն այսպէս կը ծխեն կը ծամեն տգիտանալով իրենց թոքերուն եւ ջղային գրութեան մեծապէս վեսելն, կը ծխեն առանց գիտնալու թէ նոյա շատերուն չարաչար մահուան պատճառն թիւթիւնն է: Երեք հռչակաւոր Քահանայներ ճանչցայ, կըսէ, որոց երեքն ալ թիւթիւնի հետեւութիւնն եղողքերնի ինձիթմէյէ (cancer) մեռած են, ինչպէս ժուժկալութիւն կրնան քարոզել ուրիշներուն, երբ իրենք կը չափազանցեն, շատերն հարցուփորձ ընելով պատասխանած են թէ թիւթիւնէ՝ շատ մեծ հաճոյք կիրանան, բայց Քահանայի մը ստել կը վայելէ, միթէ թոյնէ հաճոյք կրնայ սպասուիլ. Ինչ է Քահանայի մը պաշտօնն եթէ ոչ ճշմարառութիւն քարոզել:

Ինչ որ է թիւթիւնը, նոյնն է աֆիօնը, էսրարը, ամենքն ալ միեւնոյն ընտանիքէ տունկեր ըլլալով ամենքն ալ զանազան թոյներ կը պարունակեն: Ըստ ինձ, կըսէ, կրօնական մը ծխելու չէ, եթէ ոչ յանուն առողջաբանութեան, գէթ տընտեսութեան: Եթէ միայն Պըրուքլին քաղաքին մէջ մէկ տարուան ծխեալ թիւթիւնին ստակը ձեռքս անցնէր, գըտ-

նուածներէն աւելի մեծ, հոյակապ երեք որբանոցներ հաստիկ կարողանայի:

«Յայտնի է թէ Ամերիկայի Եկեղեցին, տարին 420,000,000 զուրուշ կը վասնէ կռապաշտից համար, իսկ Ամերիկայի բնակչութիւնը տարին 600,000,000 զրչ կը ծախսեն, ինքզինքնին թիւթիւնով թունաւորելու համար:»

Գալով մեր կողմանէ՝ իբրեւ բժիշկ կաւելցնենք թէ,

1. Քանի որ թոյն է, ամեն միջոց ի գործ դնելու է բնաւչիւն, եւ բաղդատութիւն չինառել օղիին եւ ծխախոտին մէջ:

2. Անօթի բերնով բնաւին չծխել:

3. Աշխատելու եւ մանաւանդ պառկելու սենեակներու մէջ
չծխել: (¹)

ՏՕՔԹՈՐ Մ. Բ. ԻՒԹԻՒՃԵՍՆ

Հ Ն Թ Ե Ր Ց Ո՛Ղ Ք

ՏՆՏԵՍՆ յանձնարարեցէք Զեր բարեկամաց.

Թերթն աժան է և օգտակար ամեն ընտանեաց.

Բաժանորդագին

Վեցամսեայ ՀԻՆԳ դրուշ միայն.

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ՀԱՆԴԻՍ ԵՂԻՍ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵՍՆԻ

Արձակ եւ ուսանաւոր

Ամիսն անգամ մը կը հրատարակուի 20—24 երեսէ բաղկացեալ: Կը պարունակէ դասախոսութիւններ, յօդուածներ, վէպեր, տաղեր: Տարեկան բաժանորդագինն է 20 դահեկան Պօլսոյ համար եւ 20 Պօլսէն դուրս: Բաժանորդագրութեան համար կրնայ դիմուիլ Տնտեսի գրասենեակներն, Զիվեր Պէյ խան, թիւ 12, 13, Ղալաթա: Գրական եւ յիւաստայրական Շարժումն հինգ տարիէ ի վեր կը հրատարակուի անխափան:

(¹) Յաջորդ թուով պիտի պատասխանենք հարցման միւս կէտերուն:

§. Բ Ի.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Հնդկանուր ժողովոյ պակաս 15 անդամոց ընտրութիւնը տեղի ունեցաւ մարտ 1 կիրակի օր եւ առաջին անդամուն 26ական ստորագրութեամբ օրինաւորապէս ընտրուեցան

Ճամճըզատէ ծէմալ էֆէնտի, պաշտօնեայ Տէրութեան եւ Միսաքեան Մինաս » Բ. անօրէն Բէժիի գործարանին. իսկ մնացեալ 15 անդամոց տեղ կրկնապատիկ ընտրելեաց ցանկի մը մէջն հետեւեալներն ընտրուեցան առաւելագոյն ձայնիւ.

- 157 Նարինեան Արրահամ էֆէնտի, Գործակալ շոգ. ընկ.
- 156 Անթօնիատիս Ժան » Տնօրէն Բէրայի հեռագր.
- 149 Խա Էտուարտ էֆ. » Փաստաբան
- 147 Մէհմէտ Շանի Պէհմէտ պէյ Պաշտօնեայ տէրութեան
- 155 Պէնկեան Յակոբ էֆէնտի Վաճառական
- 152 Խիւտագէրտիեան Մաքսուտ էֆ. Թարգման ի Մաք.
- 128 Պոյաճեան Նշան էֆէնտի Փաստաբան
- 127 Լազարիս Բանայօթիս » Վաճառական
- 127 Գաղանձեան Մկրտիչ » Պաշտօնեայ հեռագր.
- 119 Զիլճեան Քերովբէ » Զիլճի
- 115 Թորգոմեան Պօղոս » Հաշուակալ
- 100 Միւթէվէլլի Վիչէն » Պաշ. Տէրքօսի ջրի ընկ.
- 97 Անթօնիատիս Եանքօ » Երկրագործ

Մարտ 29 կիրակի օր տեղի պիտի ունենայ Միութեան
տարեկան Հնդկանուր ժողովին հետեւեալ օրակարգաւ.

1. Հնդերցանութիւն ատենագրութեան առաջին ընդհանուր ժողովոյ :
2. Տեղեկագիր *Տնօրէն ժողովոյ :
3. Հաշուեկշիռ 1886 տարուան :
4. Հաշուեցոյց ներկայ 1887 տարուան :
5. Առաջարկութիւն վաճառման Բ. 500 բաժիններու :
6. Հնարութիւն Տնօրէն ժողովոյ մէկ անդամի :
7. Հնարութիւն Խնամակալաց ժողովոյ երկու անդամոց :

Գ. ՅԱՀԵԼՈՒԱԾ

ԱՆԴԱՄՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱԼԻ	ԲԻՂՋ	ԷՓ.	Մաքինիստ
Ա.Ճ.մեան	Տիգրան	»	Պաշտ. Հեռագրատան
Ա.նթօնիատէս	Ժան	»	Տնօրէն Հոգրն. Բերա
Ա.ստուածատըն	Անդրանիկ	»	Պատկերհան
Գաբամաճեան	Զենոբ	»	Պաշտ. Հեռագրատան
Գարագաշ	Գրիգոր կ.	»	Մանիվալժ. թէլլալը
Գէորգեան	Մկրտիչ	»	Սակրիչ
Գրիգորեան	Հաճի Վլրժանէս	»	Գույումձու
Գրիգորեան	Զաքարիա	»	Խուրտավաթձի
Զաքարեան	Յակոբ	»	Վաճառական
Թէմպէքճեան	Արտեմ Պ.	Տիկին	
Թորգոմ	Պողոս Յ.	ԷՓ.	Գրագիր վաճառականի
Իտ	Էտուար Ֆ.	»	Փաստաբան
Խիւտալիբատեան	Գասպար Ա.	»	Գրագիր վաճառականի
Հարենց	Գառնիկ	»	Վաճառական
Հովիւեան	Յակոբ Պ.	»	Գոմիսիոնձի
Ճիզմէճեան	Մինաս	»	Գույումձու
Մարգարեան	Երուանդ	»	Գրագիր
Միսաքեան	Նազիկ Ա.	Տիկին	
Նշանեան	Մարուքէ	ԷՓ.	Պարտիզպան
Շըլըմեան	Կարապետ	»	Գրագիր
Զրաքեան	Յակոբ	»	Պաշտ. Պանդայի
Պէնկիւեան	Պիտոս Ս.	Օրիորդ	
Սիսակեան	Կարապետ	ԷՓ.	Մանիվալժուրանի
Վէլիմանիտի	Մանես Ա.	Օրիորդ	
Տիմիճեան	Խաչիկ կ.	ԷՓ.	Գոմիսիոնձի
Տօնիկեան	Կարապետ	»	Սենեկապետ
Քէշիւեան	Թորոս	»	Սարրափ
Քէշիւեան	Մեգրակ	»	Հացագործ
Քէօշեան	Բիւզանդ	»	Վաճառական

ՑՈՒՑԱԿ

Արեւելեան Տնտեսական Միութեան բաժանորդաց կողմանէ մինչեւ 1887 մարտ 7 (Միութեան կազմակերպութեան 43^{րդ} շաբաթէն մինչեւ 52^{րդ} շաբթուան վերջը) տեղի ունեցած շաբաթական վճարմանց , որոց ընդհանուր գումարն՝ ինչպէս կը տեսնուի՝ եղած է 56,010 դուրսուշ :

Թիւ անձի	Վ.հար. Դ.րէ.								
1	100	40	200	75	120	117	50	162	80
2	90	44	50	76	150	118	40	163	120
3	120	45	80	78	50	122	60	164	270
4	40	48	20	79	40	124	60	165	80
5	20	49	60	80	550	126	240	167	110
6	220	50	40	81	120	127	80	168	70
7	260	51	60	82	80	129	80	169	260
8	200	52	200	83	80	150	100	170	60
9	160	54	270	85	100	152	110	172	440
11	250	55	50	86	80	155	60	175	120
13	90	56	220	87	240	155	60	176	120
14	120	57	80	88	70	157	100	177	60
16	460	58	500	89	40	158	270	178	80
17	80	59	220	90	40	159	70	179	140
18	80	60	420	92	60	140	40	181	570
19	50	61	290	95	140	141	200	182	70
20	60	62	260	94	70	142	60	185	90
21	60	64	20	95	70	144	240	184	40
23	80	65	60	97	70	147	50	187	90
24	80	66	60	98	80	148	160	187	80
29	120	67	160	99	50	150	40	189	100
31	60	68	160	100	20	152	270	190	50
32	80	69	50	104	140	155	110	191	260
33	260	70	100	105	90	154	220	192	80
34	60	71	120	106	40	155	60	195	170
35	110	72	120	107	120	157	80	194	100
36	50	73	50	115	120	160	110	195	80
37	540	74	40	116	110	161	80	197	540

Թիւ անձի	Վեհար. Դ.թ.								
198	290	241	40	284	170	553	80	572	40
199	140	243	20	285	20	554	180	573	20
200	40	244	180	286	90	555	520	574	20
201	140	246	120	287	500	558	80	575	20
202	40	249	40	289	40	559	500	576	20
203	80	250	20	290	100	541	40	577	90
206	120	251	160	291	400	542	80	578	40
207	150	252	20	292	100	544	110	579	70
208	180	253	120	293	70	545	490	580	150
210	80	257	120	294	180	546	60	581	50
212	120	258	110	296	90	548	60	582	240
213	100	259	110	297	80	549	180	583	500
214	110	260	140	299	80	550	250	584	80
218	80	261	40	300	70	551	110	585	20
219	140	262	240	510	190	552	160	586	80
220	120	264	50	511	120	554	80	587	500
221	120	265	70	512	90	555	280	588	90
222	60	266	180	514	120	556	220	589	80
223	150	267	20	515	60	557	160	590	500
224	70	268	90	516	40	558	200	591	20
225	100	270	50	518	60	559	60	592	20
226	110	271	500	519	180	560	20	593	20
227	40	272	100	521	140	561	300	594	120
228	40	275	80	522	180	562	500	595	60
250	250	275	50	525	40	565	20	596	20
251	40	276	90	524	500	564	500	597	120
252	150	277	60	525	90	565	20	598	100
253	170	278	90	526	150	566	40	599	60
254	70	279	40	527	60	567	20	400	110
255	50	280	90	528	150	568	20	401	60
256	40	281	100	529	180	569	20	7,rc.	56010
259	290	282	100	531	70	570	160		
240	190	285	20	532	250	571	210		

ՍՈՎՖԵՐՔ ՄՏԱՅ

Հաւաքեալ բազմարդիւն դասատու Մեծապատիւ Թովմաս հիմնուի
թէրզեանի կողման։

1. Գովեստն այնչափ ախորժ է մարդուն մոռաց, որ գրեթէ
մեր ամեն գործոց սկզբնապատճառն է։

ՃՕՆՍԴԲՆ

2. Այրուն կերպարանք մը տեսարանաց չքնազագոյնն է,
եւ ամենէն ախորժալուր ներդաշնակութիւնն մեր սիրած ան-
ձին ձայնն է։

ԼԱՊԻՒՅԵՐ

3. Ուշի ուշով նկատէ աչօքդ զայն ում պիտի խօսիս.
շատ սրամիս մարդիկ կան որոց գլուխք ծածուկ են կերպա-
րանք թափանցիկ։

ՊԸՌԹԸՆ

4. Քերդողին հոգին աշխարհիս հայելին է։

ԼՕՆԿՑԵԼԼՈ

5. Անբաւ զգացմունք եւ մեծ ըղեղ մը, ասոնք են աշ-
խարհիս հրամայելու սահմանեալ մարդիկ։

ՊԻՔՐՆՍՅԻԼՏ

6. Մեծ հանճարոյ մը կեանքը ոչ այլ ինչ է բայց վսեմ
փոթորիկ մը։

ԺՕՐԺ ՍԱՆ

7. Պահէ լեզուդ եւ պահէ բարեկամդ։

ՍՈԿՐՈՒ

8. Եթէ գէպք ըսելով բանաւոր պատճառի մը չգտնուելն
ըսել կուղես՝ չեմ հաւտար թէ այդ ըսածիդ պէս բան մը կա-
րենայ գտնուիլ։ Ամեն պատահար շղթայի մէկ օդն ըլլալու է։

ՊԻՔՐՆՍՅԻԼՏ

9. Բնութիւնը ամեն ժամանակաց, ամեն եղանակաց ի-
րենց ուրոյն գեղեցկութիւնը կուտայ, եւ առաւօտէ մինչեւ
ցերեկ ինչպէս յօրբանէ ցդամբան յաջորդութիւն մ'է վտիո-
լութեանց, այնչափ սիրուն եւ հեշտին որ հաղիւ կը նշմա-
րենք անոնց յեղափոխութիւնն։

ՊԻՔՐՆՍՅԻԼՏ

10. Կնոջ ազդեցութիւնն մեր ճակատագրին վրայ ան-
դուլ է։

ՊԻՔՐՆՍՅԻԼՏ

11. Կեանքը զաւեշտ մ'է մտածողին եւ ողբերգ մը զգա-
ցողին։

ՈՒՈԼԲՈՒ

12. Եթէ կուզես կարուկ ըլլալ, ամիոփի եղիր. խօսքերն
ալ արեւուն ճառագայթից պէս՝ որչափ աւելի խտացեալ են
այնչափ սաստիկ կայրին։ ՍԱՌԻԴԻ

13. Եթէ լաւագոյն մարդուն յանցանքն իւր ճակտին
վրայ գրուած ըլլային՝ գլխարկը մինչեւ աչքերն իջեցնելու
էր։ ԿՐԵՑ

14. Բարոյական, զգայուն եւ բարեկիրթ մարդ մը զիս
պիտի չնախատէ, եւ ուրիշ մը չկրնար։

ՔՈՒԲԸՐ

15. Երախտագիտութիւնն պարտք մ'է զոր վճարելու է,
բայց որուն ոչ ոք իրաւունք ունի սպասելու։

Ճ. Ճ. ԲՈՒԽՈ

16. Բանաստեղծ մը աշխարհ մ'է ամիոփիեալ ի մի մարդ։
Վ. ՀԻՒԿՈ

17. Անկեղծութիւնը կը կայանայ միշտ ձշմարտութիւնն
ըսելու մէջ, բայց ոչ միշտ բոլոր ձշմարտութիւնը։
ՏԻԿԻՆ ՏԼ. ՍԹԱԼ.

ՏԻԿԻՆ ՏԼ. ՍԹԱԼ.

18. Կակիծը գիտութիւն է. անոնք որ աւելի գիտեն ա-
ւելի խորէն կուլան մահաբեր ձշմարտութեան վրայ։

ՊՈՅՈՒՆ

19. Սէրն ամեն դաստիարակներէն աւելի արագ յառա-
ջագիմել կուտայ իւր աշակերտաց։ ՖԼՈՐԵԱՆ

20. Ով որ սիրէ՝ գիտէ լիսվին թէ կենաց մէջ ինչ վշտեր
եւ ինչ բերկրանք կան։ ՃՈՐԺ ՍԱՆ

ԾԽԱԽՈՏԻ ԶՈՂ

Սթէնիայի մէջ պարտէզի մը լրճիթը բնակող ութուն
ապարեկան կարապետ անուն ծերունիի մը անկողինն այրած
ՍԻԿԱՌԻ մը բռնկելով ծերունին խեղղամահ եղեր է։

Ա.ԲԵԽԵԼ.Ք